

**0411.01.5 «ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
2023-2024ԹԹ. ՈՒՍՏԱՐՎԱ ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ ՀԱՏՈՒԿ  
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄՈԴՈՒԼՆԵՐԻՑ**

**Մոդուլներ.-«Հաշվապահական հաշվառման տեսություն», «Հաշվապահական հաշվառման կազմակերպման և վարման ընթացակարգեր» և «Փաստաթղթավորումը հաշվապահական հաշվառման վարում»**

1. Հաշվապահական հաշվառման առարկան, մեթոդը, կազմակերպումը և վարման կանոնները: Գլխավոր հաշվապահի իրավունքներն ու պարտականությունները
2. Բնութագրել կազմակերպության ակտիվները, պարտավորությունները և կապիտալը
3. Ներկայացնել հաշվապահական հաշվեկշռի դերն ու նշանակությունը: Կառուցվածքի բնութագիրը
4. Մեկնաբանել հաշվեկշռում առաջացող փոփոխությունները: Բերել օրինակներ
5. Բնութագրել ակտիվային, պասիվային և ակտիվապասիվային հաշիվները: Ներկայացնել նրանցում գրանցումներ կատարելու կարգը
6. Մեկնաբանել կրկնակի գրանցման եղանակի էությունը, հաշիվների թղթակցությունը, հաշվապահական ձևակերպում (բանաձև) տեսակները: Բերել օրինակներ
7. Մեկնաբանել հաշվապահական հաշվառման հաշվային պլանը և նրա կառուցվածքը
8. Ներկայացնել շրջանառության տեղեկագիրը, նրա դերն ու նշանակությունը, կառուցվածքի բնութագիրը
9. Ներկայացնել հաշվապահական հաշվառման հաշիվների դասակարգումն ըստ տնտեսական բովանդակության
10. Բնութագրել գույքանյութական և դրամական միջոցները հաշիվները: Ներկայացնել նրանցում գրանցումներ կատարելու կարգը
11. Բնութագրել սեփական կապիտալը, պահուստները և պարտավորությունները հաշվառող հաշիվները: Ներկայացնել նրանցում գրանցումներ կատարելու կարգը
12. Գործառնական հաշիվների բնութագիրը: Կալկուլյացիոն հաշիվների դերն ու նշանակությունը (հավաքման-բաշխման հաշիվներ)
13. Սինթետիկ և անալիտիկ հաշվառում: Նրանց փոխադարձ կապի մեկնաբանումը օրինակի միջոցով
14. Հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթեր, դասակարգումը, նրանց վավերապայմանները և կազմմանը ներկայացվող պահանջները: Փաստաթղթերի ստուգման կարգը

**Մոդուլ.- «Հիմնական միջոցների հաշվառում»**

1. Հիմնական միջոցների սահմանումը, դասակարգումը և արժեքային գնահատումը: Հիմնական միջոցները հաշվառող հաշիվների բնութագիրը
2. Ներկայացնել հիմնական միջոցների ձեռքբերման փաստաթղթային ձևակերպումը և մուտքի հաշվառումը
3. Ներկայացնել հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման և հաշվառման կարգը: Բերել օրինակներ

4. Հիմնական միջոցների գույքագրում, գույքագրման արդյունքների դուրսբերման և ձևակերպման կարգը
5. Ներկայացնել հիմնական միջոցների դուրսգրման (օտարման) հաշվառումը

**Մոդուլ.- «Ոչ նյութական ակտիվների հաշվառում»**

1. Ոչ նյութական ակտիվների սահմանումը, դասակարգումը և բնութագրումը
2. Ներկայացնել ոչ նյութական ակտիվների ձեռքբերումը և հաշվառման կարգը
3. Ներկայացնել ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան
4. Ներկայացնել ոչ նյութական ակտիվների օտարման հաշվառումը

**Մոդուլ.- «Պաշարների հաշվառում»**

1. Պաշարների սահմանումը, դասակարգումը և գնահատումը: Պաշարները հաշվառող հաշիվների բնութագիրը
2. Ներկայացնել արտադրության ծախսումների հաշվառման ընդհանուր մոդելը
3. Ներկայացնել անավարտ արտադրության և պատրաստի արտադրանքի հաշվառման կարգը
4. Նյութերի ձեռքբերման փաստաթղթային ձևակերպումը և մուտքի հաշվառման կարգը
5. Նյութերի ելքագրման փաստաթղթային ձևակերպումը և հաշվառման կարգը
6. Պաշարների գույքագրում, արդյունքների դուրսբերման և ձևակերպման կարգը

**Մոդուլներ.- «Դեբիտորներ և կրեդիտորներ» և «Դրամական միջոցների հաշվառում»**

1. Ներկայացնել դեբիտորական պարտքերի հաշվառման կարգը
2. Ներկայացնել կրեդիտորական պարտքերի հաշվառման կարգը
3. Կանխիկ հաշվարկների կիրառությունը, իրականացման կարգը, հաշվառման սկզբնական փաստաթղթերը
4. Ներկայացնել դրամարկղային գրքի վարման կարգը
5. Առհաշիվ տրված կանխիկ գումարների հաշվառման կարգը
6. Ներկայացնել հաշվարկային հաշվի գործառնությունների հաշվառման կարգը:
7. Մեկնաբանել հաշվարկային հաշվի քաղվածքը
8. Արտարժույթով դրամական գործառնությունների հաշվառման կարգը և առանձնահատկությունները
9. Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների հաշվարկման և անհուսալի պարտքերի դուրսգրման կարգը

**Մոդուլ.- «Սեփական կապիտալ: Եկամուտների և ծախսերի հաշվառում»**

1. Եկամուտների և ծախսերի սահմանումը, դասակարգումը և հաշվառման կարգը
2. Բնութագրել գործառնական գործունեությունից առաջացած եկամուտները: Ներկայացնել նրանց հաշվառման կարգը
3. Բնութագրել գործառնական գործունեությունից առաջացած ծախսերը: Ներկայացնել նրանց հաշվառման կարգը

4. Բնութագրել ոչ գործառնական գործունեությունից առաջացած եկամուտները: Ներկայացնել նրանց հաշվառման կարգը
5. Բնութագրել ոչ գործառնական գործունեությունից առաջացած ծախսերը: Ներկայացնել նրանց հաշվառման կարգը
6. Աշխատանքի վարձատրության համակարգը
7. Աշխատողի հետ ամենամյա արձակուրդի հաշվարկման և վճարման կարգը
8. Ժամանակավոր անաշխատունակության նպաստի հաշվարկման և վճարման կարգը
9. Ներկայացնել աշխատավարձից կատարվող պահումները: Առձեռն վճարվող աշխատավարձի գումարի հաշվարկման և վճարման կարգը
10. Ֆինանսահետևանքային հաշիվների բնութագիրը: Ներկայացնել ֆինանսական հետևանքի բացահայտման մեխանիզմը

**Մոդուլ.- «Հարկային օրենսդրություն»**

1. Հարկեր և հարկման համակարգեր
2. Հարկման մեթոդները: Հարկային արտոնություններ
3. Ներկայացնել ուղղակի և անուղղակի հարկերը: Եկամտային հարկ
4. Ուղղակի և անուղղակի հարկեր: Շահութահարկ

**Կազմեց՝**

**Մ. Թադևոսյան**